

վաճառականութեամբ ունեցած կապակցութիւնը ձեռքէ չհանեցին: Եւրոպական դրամատուններու մէջ պահ ձգուած դրամադրուիւններու ուժով եւ շուկաններու հետ ունեցած ծանօթութեան շնորհիւ կրցան ոչ միայն գաղթական ժողովրդեան առժամապէս օգնութեան հասնիլ, այլ եւ մղում տալ պարսկական վաճառականութեան, արտածմամբ եւ ներածմամբ: Ծահ Աբաս կը քաջալերէր զիրենք:

Այսպէս Զուղայեցիք ինչպէս Երկրին մէջ, նոյնպէս գաղթականութեան մէջ պահեցին իրենց համբաւն եւ հասարակական կեանքի վրայ ազդեցութիւնը: Նոր-Զուղայեցիներու կամքով կը կառավարուէին ազգայնոց թէ ներքին, թէ արտաքին եւ թէ եկեղեցական քաղաքականութիւնը: Անոնց թուին մէջ անուանի հանդիսացած էր Խոջայ Նազար, որ կը վայելէր Ծահին ալ համակրութիւնն եւ վստահութիւնը:

Խոջայ Նազար իւր բարեացակամութեամբ եւ հեռատեսութեամբ կ'առաջնորդէր Ազգին, ուղղութիւն կու տար հայ Եկեղեցւոյ, մասնաւորապէս խորհրդականն էր Մովսէս կաթողիկոսի եւ անոր պաշտպանը ի սկզբանէ անտի: Բարեացակամ էր անիկա նոյնքան ազնուութեամբ նաեւ հանդէպ Եւրոպացի առաքելներու, որոնք կը գործէին Սպահան եւ կամ Պարսկաստանի ճանապարհով կ'ուղեւորէին դէպի հեռաւոր արեւելք: Անոր այս բարեացակամ վերաբերմունքը արեւմտեան առաքելներու հանդէպ ոչ միայն գոհ ձգած էր